

ապա համախումբ բազմութեամբն եւ երաժշտական դասուք պարս յօրինեալ, տարան նստուցին զթոռն նախկին տեառն իւրեանց (Պեմունդի Գ) զպատանեակն Ռուբէն, անուանելով Բրինձ Անտիոքայ. եւ հանդարտեաց առ վայր մի իշխանութիւնն եւ ժողովուրդն, շնորհս ունելով Լեւոնի, որ ոչ միայն օգնութիւն, այլ եւ ընծայս մեծամեծս պարգեւեաց պարոնայցն եւ ժառանգաւորաց եկեղեցւոյն. բաշխեաց առատապէս տուրս եւ ՚ի վանորայս Սեաւ լերին. թոյլ ետ պատրիարքին ձեռնադրել նոր եպիսկոպոս (լատին) վասն Տարսոնի եկեղեցւոյն, հաստատել եպիսկոպոս եւ եւս ՚ի Մամեստիա, կարգելով նոցա ռոճիկ յարքունուստ. դարձոյց ՚ի վանս Ս. Պօղոսի զԱդրիւրն Կաստոնի¹⁶⁵, ամենայն կալուածովք նորին. նոյնպէս եւ առ տաճարականս՝ զբերդն Կաստոն եւ զկալուածսն գրաւեալս¹⁶⁶, եւ առ այլս՝ զյափշտակեալսն յինքենէ եւ ՚ի կոմսէն. եւ դարձաւ փառօք յերկիր իւր:– Յայսմ նուագի թուի հատեալ Լեւոնի զդրամն՝ լատին գրով եւ նշանակաւ իսաչի դրամոց Անտիոքայ. բայց ոչ յանուն սորին՝ այլ Հայոց թագաւոր վերագրելով որպէս ՚ի դրամս Սիսուանայ, եւ լռելեայն իմն ծանուցանելով զկարողութիւն իւր եւ զյաղթանակ. զարմանալի իմն նմանութեամբ եւ հարուստ հեռաւորութեամբ ժամանակի, յետ 1300 ամաց նախնոյն իւրոյ Տիգրանայ Արշակունւոյ, որ նմանապէս հրաւիրեալ եւ զինավառեալ՝ կալաւ զտէրութիւնն Սելեւկիացւոց եւ զմայր քաղաքաց նոցին զԱնտիոքս այս, զոր եւ կերպարանէ ՚ի դրամս իւր պատկերաւ Ռոնդէս գետոյ, շրջափակեալ յունագիր անուամբ իւրով, որպէս տեսանի ՚ի սակաւագիւտ յայսմ դրամի (թիւ 222)¹⁶⁷: Զայս ամենայն ծանոյց Լեւոն գրով առ Քահանայապետն, վկայս ցուցանելով զասպետս երկոցուն կարգացն. եւ խնդրելով զի հաճեսցի առ պատուական ունել զպատրիարքն՝ զպատճառ

¹⁶⁵ Որ յիշեցաւ յէջ 455:

¹⁶⁶ Castellum de Gastum, quod super paganos acquisivimus et propter guerram nunc usque detenuimus, restituimus Templarijs, et facti sumus amici ad invicem.- Թուրթ Լեւոնի առ Իննովկենտիոս Գ, որ է ՚ի շարս թղթոց սորին, Ժ. ՄԺԴ:

¹⁶⁷ Տիգրանայ դրամք եւ կրկնադրամք արծաթիք եւ պղնձիք գտանին ցարդ յոլովք. բայց մեծայարգի է պատկերեալս աստանօր՝ ձեռով աշխարհաւանդ երիզակի թագին, որ ոչ որպէս զայլոց բազմաց անծալ եւ համակ է, այլ որպէս տեսանիդ՝ հանգոյց հանգոյց կամ մէջ ընդ մէջ ոլորեալ. զայս՝ նշանական իմն համարի ստացող դրամոյն Հայահաւաք հնախոյզն:– Իսկ Լեւոնի դրամն արծաթապղինձ (Billon), որ միակ ծանուցեալ կարծի, պահի ՚ի թանգարանի ազնուականի ուրումն Գերմանացւոյ: